ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 02.10.2017թ. ժամը 11^{00}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվելած <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ալեքսան Եղիշյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Վարդան Քալանթարյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Համլետ Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Համլիկ Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Գնահատող հանձնաժողովն որոշեց.

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.09.2017թ. ստացված տեղեկատվությունը, համաձայն որի առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<Հազարաշեն>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:
2. <<Հազարաշեն>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:
4. <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի հետ կնքել Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար նախագծահետազոտական աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր N <<ԿՈՏ-ԳՀԱՇՁԲ-17/1>>, որի ընդհանուր գինը կազմում է՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:
5. Ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և ներկայացնել պայմանագրի ապահովումը:

6. Գնահատող հանձնաժողովի գնման ընթացակարգի ամփոփման նիստը հրավիրել ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքելու հաջորդ աշխատանքային օրը:

Հանձնաժողովի նախագահ՝	----------	*Ա.Եղիշյան*
անդամներ՝	----------	*Վ.Քալանթարյան*
	----------	*Հ.Ստեփանյան*
Քարտուղար՝	----------	*Հ.Հակոբյան*